



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ

375051, Երևան, Կոմիտասի պողոտա հ. 37/4, հեռ. / ֆաքս 203027, E-mail: kpt@edu.am

№ _____

« » հուլիսի 2013թ.

ՀՀ Արարատի մարզպետ

Է. Բարսեղյանին

Հարգելի պարոն մարզպետ

Ղեկավարվելով «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերով, հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի՝ 2013 թվականի փետրվարի 26-ի N 46-Ա հրամանը, ի կատարումն ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի՝ 2013 թվականի փետրվարի 21-ի N 14-Ա կարգադրության՝ 2013 թվականի մարտի 4-27-ը ներառյալ ՀՀ Արարատի մարզում ուսումնասիրվել են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտական կարգերին համապատասխան՝ սովորողների շարժը, ավարտական պետական փաստաթղթերի ստացումը, պահպանությունը և բաշխումը:

Բացի այդ, ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2013 թվականի փետրվարի 26-ի N 101-Ա հրամանի հիման վրա և ի կատարումն ՀՀ կրթության պետական տեսչության պետի 2013 թվականի փետրվարի 27-ի N 01-Ա հանձնարարագրի՝ 2013 թվականի մարտի 4-ից մինչև 25-ը ներառյալ՝ Երևան քաղաքում, իսկ 2013 թվականի մարտի 26-ից ապրիլի 30 ներառյալ ՀՀ մարզերում իրականացվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող թվով **108** պետական, **20** ոչ պետական ուսումնական հաստատությունների և **2** օտարերկրյա բուհերի մասնաճյուղերի ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտական կարգերին համապատասխան՝ սովորողների շարժի թեմատիկ ստուգում:

Ուսումնասիրության և թեմատիկ ստուգման արդյունքում հավաքագրված տվյալների համադրումից պարզվել է.

1. **ՀՀ Արարատի մարզի Սիսավանի միջնակարգ դպրոցի** տնօրենի՝ **01.10.2012թ.** հ.184 հրամանի համաձայն (հիմք՝ ծնողի 28.09.2012թ. դիմումը) Գարիկ Օնիկի Կարապետյանը ընդունվել է դպրոցի **12-րդ** դասարան (առանց հիմնական կրթության վկայականի առկայության):

<<Հայաստանում եվրոպական քոլեջ>> հիմնադրամի **Վեդու մասնաճյուղի տնօրենի՝ 29.08.2012թ.-ի** 02/169 հրամանով Գ. Կարապետյանը ընդունվել է **<<Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում>>** բաժնի 1-ին կուրս և տնօրենի **15.10.2012թ.** N 01/107 հրամանով **սահմանված կարգով** ազատվել քոլեջից (ստանալով հիմնական կրթության վկայականը):

Փաստացի վերոնշյալ սովորողը 01.10.2012թ.-ից մինչև 15.10.2012թ. ընկած ժամանակահատվածում միաժամանակ հրամանագրված է եղել երկու ուսումնական հաստատություններում:

2. **ՀՀ Արարատի մարզի Շահումյանի Ա. Համբարձումյանի անվան միջնակարգ դպրոցի** տնօրենի՝ **31.08.2012թ.** հ.130 հրամանով (հիմք ծնողի՝31.08.2012թ. դիմումը) դպրոցի 11-րդ դասարան է ընդունվել Սերգեյ Սամվելի Թովմասյանը՝ առանց հիմնական կրթության վկայականի առկայության: Տնօրենի **18.09.2012թ.-ի** հ.137 հրամանով (հիմք ծնողի՝ 17.09.2012թ. դիմումը) սովորողը ազատվել է դպրոցի աշակերտական համակազմից:

Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի տնօրենի՝ 29.08.2012թ.-ի հ. 47 հրամանով (հիմք ծնողի՝ 23.08.2012թ. դիմումը) Ս. Թովմասյանը **սահմանված կարգով** ընդունվել է քոլեջի առաջին կուրս:

Փաստացի վերոնշյալ սովորողը 31.08.2012թ.-ից մինչև 18.09.2012թ. ընկած ժամանակահատվածում միաժամանակ հրամանագրված է եղել երկու ուսումնական հաստատություններում:

Սիսավանի և Շահումյանի Ա. Համբարձումյանի անվան միջնակարգ դպրոցների տնօրենների կողմից խախտվել է ՀՀ ԿԳ նախարարի 2010թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգի» 18-րդ կետի՝ «ավագ դպրոց ընդունվելիս սովորողի ծնողը ներկայացնում է հիմնական կրթության վկայականի բնօրինակը...» պահանջը:

3. ՀՀ Արարատի մարզի Բաղրամյանի Թ. Փոստաջանի անվան միջնակարգ դպրոցի տնօրենի՝ 14.09.2012թ. հ.12 և 18.09.2012թ. հ.14 հրամաններով (հիմք ծնողների՝ 14.09.2012թ. և 18.09.2012թ. դիմումները) 10-րդ դասարանի սովորողներ Աշոտ էդիկի Հախվերդյանը և Մնացական Արայիկի Հակոբյանը ազատվել են դպրոցի աշակերտական համակազմից: Արարատի տարածքային պետական քոլեջի տնօրենի՝ **29.08.2012թ.** հ.88 հրամանով Ա. Հախվերդյանը և Մ. Հակոբյանը **սահմանված կարգով** ընդունվել են քոլեջի առաջին կուրս:

Փաստացի վերոնշյալ սովորողները 29.08.2012թ.-14.09.2012թ. և 29.08.2012թ.-18.09.2012թ. միաժամանակ հրամանագրված են եղել երկու ուսումնական հաստատություններում:

Բաղրամյանի Թ. Փոստաջանի անվան միջնակարգ դպրոցի տնօրենի կողմից խախտվել է ՀՀ ԿԳ նախարարի 2010թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանով հաստատված **«Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգի»** 27-րդ կետի 1-ին ենթակետի **«Սովորողի ազատումը դպրոցից կատարվում է ծնողի դիմումի հիման վրա» պահանջը:**

Հարգելի պարոն մարզպետ, ելնելով վերոնշյալից, առաջարկում եմ.

- քննարկել համադրման արդյունքները և ձեռնարկել համապատասխան միջոցներ,
- ՀՀ կրթության և գիտության նախարարին ամբողջական տեղեկատվություն տրամադրելու նպատակով վերջնական արդյունքների մասին տեղյակ պահել ՀՀ կրթության պետական տեսչությանը:

Հարգանքով՝



???? ?????????

Jul 10 2013 5:24 PM

Ա. Կարապետյան